

## ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մեծավան համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Մեծավան	Ավագանու արտահերթ նիստ	10.06.2020թ.	14 <sup>-30</sup>	<b>Մեծավանի</b> համայնքապետարան գ . Մ Ե ծ ավ ան 2 . Ա ն դ ր ան ի կ ի 2

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. հունիսի 10-ին Մեծավանի համայնքապետարանում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

### Ժամը՝ 14.30

1. Մեծավան համայնքի ավագանու 2020թվականի հունիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգ հաստատելու մասին

զեկ՝ Հ՝ Քաչակույան

2. ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի «Մշակույթի կենտրոնի» շենքի աջակողմյան միահարկ հատվածամասի քանդման մասին

Ջեկ՝ Ա՝ Վարդանյան

3. 06-074-0045-0030 ծածկագրով 0,42804հա մակերեսով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Ջեկ՝ Ա՝ Վարդանյան

4. Մեծավան համայնքի ավագանու 2018թվականի մարտի 30-ի «Մեծավան համայնքի խնամակալություն և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ՝ Հ՝ Քաչակույան

5. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

զեկ՝ Հ՝ Քաչակույան

**ՆԱԽԱԳԻԾ 28-Ա**

---

**ՄԵԾԱՎԱՆ ՀՄԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի  
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկ. ՀՊ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

Հաստատել Մեծավան համայնքի ավագանու 2020թվականի հունիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1. Մեծավան համայնքի ավագանու 2020թվականի հունիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգ հաստատելու մասին
2. ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի «Մշակույթի կենտրոնի» շենքի աջակողմյան միահարկ հատվածամասի քանդման մասին
3. 06-074-0045-0030 ծածկագրով 0,42804հա մակերեսով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
4. Մեծավան համայնքի ավագանու 2018թվականի մարտի 30-ի «Մեծավան համայնքի խնամակալություն և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
5. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

**ՆԱԽԱԳԻԾ 29-Ա**

---

**ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԿԵՆՏՐՈՆԻ » ՇԵՆՔԻ ԱԶԱԿՈՂՄՅԱՆ  
ՄԻԱՀԱՐԿ ՀԱՏՎԱԾԱՄԱՍԻ ՔԱՆԴՄԱՆ  
ՄԱՍԻՆ**

---

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-ձ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի «Մշակույթի կենտրոնի» շենքի աջակոմյան միահարկ հատվածամասի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը՝ Մեծավան համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայն հիշյալ կազմակերպության եզրակացության՝ քանդել Մեծավանի «Մշակույթի կենտրոնի» շենքի աջակոմյան միահարկ, 4-րդ աստիճանի վթարայնության հատվածամասը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 30-Ա

---

**06-074-0045-0030 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,42804ՀԱ  
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

/Զեկ. ԱՁ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Առաջնորդվելով ՀՀ Կառավարության առընթեր ԱԳԿՊԿ նախագահի 2010թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ ԷՁ

Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-074-0045-0030 կադաստրային ծածակագրով 0,42804հա մակերեսով հողամասը ճանաչել Մեծավան համայնքի սեփականություն՝ որպես բնակավայրերի նպատակային նշանակության

հասարակական կառուցապատման գործառնական հողամաս, քանի որ դրա նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հավաստող փաստաթուղթ այլ սուբյեկտի անվամբ:

ՆԱԽԱԳԻԾ 31-Ա

---

**ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2018ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի՝ «ՄԵԾԱՎԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 10-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԱՇ ՎԱՐԴԱՆՅԱՆ/*

*/Զեկ. ՀԱՅԱՐՓԻ ՔԱԶԱԿՈՒԼՅԱՆ/*

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ ԷՁ

1. Մեծավան համայնքի ավագանու 2018թվականի մարտի 30-ի «Մեծավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 10-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի Արուայակ Դումիկյան բառերը փոխարինել Մելինե Սուքիասյան բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 32-Ա

---

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ  
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԱՁ ՎԱՐԴԱՆՅԱՆ/*

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին, Մեծավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 46-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: